



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

----- 2017 թվականի №---Ա
ք.Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 27-Ի №420Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԼՈՒՍԱՐՓԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2017 թվականի հուլիսի 6-ի №01/07 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով երկու տարի ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 27-ի «ԼՈՒՍԱՐՓԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Լուսարփի» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №420Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) Ընկերությանը տրամադրված «Լուսարփի» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0521 լիցենզիայով (այսուհետ՝ №0521 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը, տեղեկացնելով, որ համայնքի ղեկավարի և բնակիչների անհամաձայնության պատճառով մինչ օրս որևէ աշխատանք չի կատարվել,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 39-րդ կետի համաձայն՝ արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը կարող է երկարաձգվել նախկինում սահմանված կառուցման ժամանակահատվածից ոչ ավելի,

գ) Հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 30-ի №348Ա որոշմամբ №0521 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել էր մեկ տարի տասն ամիս ժամկետով, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը՝ **Հանձնաժողովը որոշում է.**

1. Երկարաձգել №0521 լիցենզիայով ամրագրված «Լուսարփի» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը մեկ տարի տասն ամիս ժամկետով՝ Որոշման 2-րդ կետով հաստատված №0521 լիցենզիայի պայմանների 3-րդ կետի 1-ին ենթակետում «մինչև 2017 թվականի հուլիսի 30-ը» բառերը փոխարինելով «մինչև 2019 թվականի մայիսի 30-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ №0521 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Լուսարփի» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
 - 1) մեկամսյա ժամկետում «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2015 թվականի նոյեմբերի 2-ի №739 գրությամբ Հանձնաժողով ներկայացված №EA15/00130 երաշխիքի համաձայն երաշխավորված երկու միլիոն չորս հարյուր ութսուն հազար դրամ գումարից մեկ միլիոն երկու հարյուր քառասուն հազար դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
 - 2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել երկու միլիոն չորս հարյուր ութսուն հազար դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2019 թվականի հուլիսի 14-ը գործողության ժամկետով:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հուլիսի 30-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ